

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Խ Ո Զ Ը



ԳՅՈՒՂԱՅՈՒ ԿԵՐԱԿՐՈՂ Ե

ԲԻԲ. ՀԱՅԱՍՏԱՆ
ԻԻ. ԽՈՄԱ
ԽՈՏՈԽԵԼԻՆԻ
Ազգային Խոմա
СССР

636.4

L-53

Խ Ո Զ Ը ԽՈԴԱՅՈՒԹՅՈՒՆ. ԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Մ Ո Ս Կ Ա

1926

0192b.1549
OCT 2010

№996

ՀԱ
ՀԱ 1302

636.4

L-53

Գ-ՅՈՒՂԱՑԵՍ Պ. Բ. ԼԻՆՈԶՅՈՒ

ԽՈՃԸ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե



(Չեղանակ գյուղացիների համար)

ՎԻՃՈՒՅՆ
Института
ВОСТОЧНОСЕДЕНІЯ
Академії наук
СССР



ԽՈՃԸ ԳՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ 1926

ԽՈԶԸ ԳՅԱԿԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե

Ճիշտ յեն ասում, վոր խոզը գյուղացու համար խնայողություն անելու, փող յետ ձգելու միտուփ եւ զենց այդպես ել եւ գյուղացիները խոզին տալիս յեն կերի ավելցուկը, թափթփուկը, և խոզը այդ բոլորը ուտում եւ, թանկագին միս և յուղ դարձնում:

Ի՞նչ է տաշիս խոզը: Խոզը գյուղացուն հնարավորություն եւ տալիս նրա տնտեսությունը շուտ լավացնելու, վորովհետեւ—

1. Շատ ավելի ձեռնտու յեւ, վոր կերն ամենից առաջ խոզին տրվի:

2. Խոզը ամեն ինչ ուտում եւ, և հացահատիկ, և ալյուր, և թեփ, և արմտիք, և կարտոֆիլ, և խոտ, և ամեն տեսակի տականքներ:

3. Տասը վթանոց մի կով մեծացնելու համար հորթը յերկու, թերես և յերեք տարի պետք եւ կերակրել: Խոկ խոզը մի տարում տասը վութ եւ տալիս:

4. Կովի մի վութ կենդանի քաշից ստացվում եւ կես վութ միս. խոկ խոզի մի վութ կեն-

*Напечатан в типографии Госиздата
„Красный Пролетарий“, Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 3000 экз.
Главлит № 5430*



59282-66

դանի քաշից ստացվում է 33 ֆունտ միս և յուղ.

5. Խոզի միսը յուղի հետ միասին բաղարում գրեթե յերեք անգամ ավելի է զնահատվում, քան տափարի միսը։ Մննդի կողմից ել չաղ խոզի միսը կովի մսից համարյա թե յերեք անգամ ուժեղ է։

6. Նոր ծնած խոզը իր առաջին իսկ գոջիներով հատուցանում է իրեն վրա արած բոլոր ծախսերը, ինքը՝ 10 փթանոց խոզը՝ ձրի և մնում տիրոջը։

7. Խոզ մեծացնելու համար շատ ժամանակ հարկավոր չե, — մեկել տեսար բազմապատկվեցին...

8. Մի որավար կարտոֆիլը մի տարի կարող է կերակրել 6 խոզ, ամեն մեկը 8-ից մինչև 10 փթանոց։ Ծախիք այդ խոզերը՝ փութը առավագն 8 ոռւբլի — ահա և քեզ փող՝ 450 ոռւբլի։ Մտածիր, թե ուրիշ կերպով դու ինչպե՞ս կարող յես մի որավարից 450 ոռւբլի ստանալ։

Ինչպիսի՞ խոզեր բազմացնելու հասարակ խոզերը հասարակ խոզեր յեն պահում և չեն հասկանում խոզեր բազմացնելու ամբողջ ոգտավետությունը։

Բայց հասարակ խոզեր և լավացեղ խոզեր բազմացնելու մեջ ահա թե ինչպիսի զանազանություն կա, յեթե վեց ամսական խոզը չա-

զացնելու նպատակով կերակրենք, նա մի ամսում կտա ամենաշաղաթը 8 ֆունտ միս և յուղ։ Խոզ յեթե մինույն կերը լավացեղ խոզին աանք, մի ամսում նրա մսի կյուղի քաշը 25-ից մինչև 30 ֆունտ կավելանա։ Ուրեմն անհամեմատ շատ ձեռնտու յե լավացեղ խոզեր պահել, քան թե հասարակ խոզեր։

Ամենից ձեռնտու յե զուտ անզյիական շալացեղ խոզեր պահելու Զուր յեն կարծում, թե այդ խոզերի համար առանձին տեսակի տաք գոմեր են հարկավոր և թե նրանց առանձնապես պետք ե խնամել։ Այդ ճիշտ չե։ մեր զյուղացիների տնտեսություններին լավացեղ խոզերը շատ լավ յեն ընտելանում, յեթե միայն իմանում յեն նրանց ինամելու յեղանակը։

Յավը ուրիշ բանում ե. լավացեղ խոզեր առ այժմ դեռևս շատ դժվար է ճարել։ ԽՍՀՄ մեջ առ այժմ նրանք շատ սակավաթիվ յեն։

Սպիտակ ամենալավ խոզերը անգլիական խոզերն յեն — Իորջիյի ցեղից՝ խոշոր յեվ սպիտակ։ Այդ ցեղի յերկու տարեկան խոզերի քաշը կարելի յե մինչև 25 փթի հասցնել, իսկ անգլիացի գյուղացիները կարողանում են մինչև իսկ 35 փթի հասցնել։

Ահա հենց այդ խոզերը ամենաարդյունավետ խոզերն են համարվում։ Նրանք լավ մեծանում

են, լավ ել ընտելանում են մինչև անգամ սառը խողանոցներին: Յեթե կերի պակասություն լինի, այդ խոզերը քաղցած մնալ ել կարողանում յեն: Կերի կողմից նրանք պահանջկոտ չեն, սատիկ և լավ աճում յեն, առանձնապես զգայուն ել չեն դեպի հիվանդությունները:

Իսկ յես իմ տնտեսության մեջ անգլիական բերկիրի ցեղից սկ խոզեր յեմ մեծացնում: Նրանք սպիտակներից մի քիչ փոքր յեն, յերկու տարեկան բերկիրների քաշը մոտավորապես 16 փութե լինում: Սակայն բերկիրի խոզերը ավելի դիմացկուն են, քան թե անգլիական սպիտակ խոզերը, նրանք կերի կողմից պահանջկոտ չեն, ամառը նաև վատ արտօտավայրերում շատ լավ կշտանում յեն: Անգլիացի գյուղացիները, և մասնավոր ամերիկացիները, այդ խոզերին շատ են սիրում և նրանցից ավելի շատ յեն պահում, քան սպիտակներից: Բայց ծախելու համար դրանք ավելի քիչ յեն պիտանի, վորովհետեւ բազարում միշտ սպիտակ խոզի միտ յեն պահանջում և սրա համար ավելի թանգ յեն վճարում:

Իսկ առայժմ ԽՍՀՄ-ում լավացեղ խոզեր քիչ յեն, պետք ե խառնուրդներ պահել: Խառնուրդներն ել շատ լավ չաղանում յեն և լավ մեծանում: Իսկ գյուղացիների տնտեսության համար թերևս խառնուրդները ավելի հարմար լի-

նեն: Դեռևս մենք մեր անտեսությունը կարգի չենք բերել և իսկական բնակարան տալ խոզերին չենք կարող: Յեվ նրանց խնամեն ել մենք, ինչպես հարկն ե, դեռ չենք սովորել: Ուրեմն ավելի լավ ե եժանագին հասարակ-խառնուրդների վրա սովորենք:

Ի՞նչ տեղ պահել խոզերին: Յեթե մենք մի կամ յերկու խոզ յենք ուզում մեծացնել, —ի հարկե առանձին խողանոց շինել չարժի: Յեթե կովերի գոմը տաք ե, —այնտեղ մի յերկու խոզերի համար ել միշտ տեղ կդանվի: Այժմ ամեն մի գյուղացի հասկանում ե, վոր ձևեռն ավելի շահավետ է կովերն ավելի տաք գոմերում պահել: Ցուրտ գոմում գրեթե կրկնակի կեր ե գնում: Իսկ տաք գոմում խոզերի համար ել լավ կլինի:

Բացի գրանից՝ գոմը բավականաչափ լույս պիտի լինի. Վորքան գոմը լույս ե, այնքան կենդանիները այնտեղ առողջ և ուրախ յեն լինում, —այս պետք ե միշտ հիշել:

Խոզերի կանգնելու տեղը անպատճառ հատակ պիտի ունենա: Խոզերի համար կավախառն կամ հողի հատակը անպետք ե. ինչքան ել տակը փոելու լինենք, միշտ կեղտոտություն և խոնավություն կլինի: Իսկ կեղտոտության և խոնավության մեջ լավ խոզեր մեծացնել չի կարելի:

Հատակը փայտից պիտի շինել — տախտակնե-

րից կամ լավ տաշած, միմյանց լավ մոտեցրած
ձողերից: Նախ կավախառն հատակ պետք ե շի-
նել, փոքր ինչ թեք, փորաեսզի թրիքի հեղուկը
կանգնելու տեղից ցած գնա: Իսկ այդ հատակի
վրա արդեն յերկրորդ՝ փայտի հատակն յեն շի-
նում. Փայտի հատակն ել քիչ թեք պիտի լինի.
Խոզը մաքրասեր ե և սիրում ե չոր տեղում
քնել: Մարդիկ ասում յեն՝ «խոզի պես կեղտոտ
ե»—այդ ճիշտ չե. Խոզը մեղավոր չե, վոր նրան
կեղտոտության մեջ յեն պահում: Իսկ յեթե կա-
նոնավոր կերպով խոզին պահեն, նա միշտ կաշ-
խատի իր անկողինը չոր տեղում շինել:

Ի՞նչպես պետ ե յինի մտուրը: Մոռւրը տաշ-
տակի ձևով պիտի շինված լինի: Այնպես պետք
ե տեղավորել այդ տաշտը, վոր խոզը չկարողա-
նա նրա մեջ մտնել: Այդ տաշտը կանգնելու տե-
ղին այնքան պետք ե մոտեցնել, վոր խոզը միայն
դունչը կարողանա տաշտի մեջ կոխել:

Ի՞նչպես խոզի գոյին մեծացնել առանց մոր:
Գյուղացիները ամենից հաճախ ստիպված յեն
լինում խոզի գոյիները մեծացնել առանց մոր:
Նրանք կամ բազարում յեն գնում, կամ հարե-
վաներից, կամ մի ուրիշ գյուղում, և ապա մե-
ծացնում: Յեվ շատ հաճախ ե պատահում, վոր
խոզի գոյնու համար վճարած փողը և նրան տված
կերը գուր տեղը կորչում յեն: Գոյին կամ հի-

վանդ ե լինում և կամ քաղցից ուժասպառ յե-
ղած, և այդպիսի գոյին առողջացնել, լավացնել
չի հաջողվում:

Բաղարում խոզի գոյիներ գնելու ժամանակ
պետք ե նայել, արդյոք առո՞ղջ յեն, մանավանդ—
արդյոք չկա՞ն փորլուծությամբ հիվանդներ: Փոր-
լուծությամբ հիվանդ գոյիների յետույքը սովո-
րաբար կեղտոտ ե լինում, իրենք—ախուր: Պետք
ե նայել, արդյոք մարմնի վրա չկա՞ն բցափիկնե-
րի նման բծեր, արեյոք չե՞ն հազում:

Յեթե գոյիների դունչը յերկայն ե, այդպի-
սիներին պետք չե գնել. գրանք հասարակ խո-
զեր են, վորոնցից ոգուտ չի լինիլ: Գլուխը կարձ
պիտի լինի, ճակատը լայն, ծոծրակը նույնպես
լայն: Վիզը կարձ պիտի լինի կամ, ավելի ճիշտ
ասած, վիզ ամեննեին չպետք ե լինի. Խոզի լայն
ծոծրակը պիտի միացած լինի գլխի հետ և ան-
նկատելի կերպով մարմնի հետ ձուլված:

Յերկու շաբաթականից պակաս գոյի հարկա-
վոր չե գնել, ավելի լավ ե մեծը գնել: Հետո լավ
պիտի հիշել, վոր այդպիսի գոյի կարելի յե մե-
ծացնել՝ առատորեն անխառն կաթ տալով նրան:
Առանց կաթի բան դուրս չի դալ:

Հարկավոր ե յեփ տված կաթ տալ, մի քիչ
գոլ: Առավոտյան կարելի յե ամբողջ որվա հա-
մար կաթը յեփ տալ, իսկ տալուց առաջ կաթը

մի թեթև տաքացնել։ Տաշտի մեջ այնքան պետք է ածել, վոր նա մի անգամից կարողանա խմել։ Տաշտը լավ է վոր կավից լինի, կամ մի ուրիշ աման լինի, վորպեսզի ամեն անգամ կերակրելուց հետո կարելի լինի մաքուր, շատ մաքուր վողողել։ Յեթե կաթը տաշտի մեջ թողնելու լինեք, նա շուտ կթթվի, և գոջին կարող է հիվանդանալ։ Անպատճառ պետք է սովորեցնել, վոր խոզի գոջին ամանից այնպես խմի, ինչպես հորթերին և ուղերին յեն ընտելացնում։

Յեթե յերկու շաբաթական գոջի յե ձեռք բերված, պետք է նրան որը հինգ անգամ անխառն կաթով կերակրել, ամեն անգամ տալ այնքան, ինչքան նա կարող է միանվագ խմել։ Յերեք շաբաթականին կարելի յե միայն յերկու շաբաթ անխառն կաթ տալ։

Բայց յեթե անխառն կաթով գոջուն չկերակրես, լավ խոզ չես ունենալ։ Իսկ յերեք շաբաթական գոջուն կերակրելու յերկրորդ շաբաթից սկսած, կամ յերկու շաբաթական գոջուն յերրորդ շաբաթից կարելի յե ջարդած վարսակ կամ գարի տալ՝ գոլորշիյով տաքացրած։ Յեթե կարելի յե տափակացնող գործիք գտնել, — վարսակը կամ գարին ջարդելու փոխարեն ավելի լավ է տափակացնել։ Նույնպես կարելի յե սիսեռով և ցորենով կերակրել, բայց միայն ջարդած և տաք

ջրի գոլորշիյով տաքացրած (դնել մի ամանի մեջ, վրան տաք ջուր ածել և ամանի բերանը ծածկել)։

Հինգ կամ վեց շաբաթից հետո (յերկու շաբաթականին՝ վեց շաբաթից հետո) հետզհետե կարելի յե անխառն կաթը յերես քաշած կաթով փոխարինել։ Ամեն որ պետք է անխառն կաթը պակասեցնել և յերես քաշածն ավելացնել։ Այդ ժամանակ հացահատիկն ել պետք ե ավելացնել։

Յերբ վոր գոջին յերեք ամսական ե դառնում, կարելի յե սկսել նրան կարտոֆիլով և բանջարեղենով կերակրել։ Այդ հասակում գոջիների համար ոգտավետ ե մանավանդ դաղարը, և նրանք միշտ մեծ ագահությամբ գազարը լափում յեն։

Այդ ժամանակ լավ ցեղի գոջիների ամեն մեկի քաշը 30 ֆունտի մոտ է լինում, խառնուրդներինը՝ մի քիչ պակաս, իսկ հասարակ գոջիներինը՝ գրեթե յերեք անգամ պակաս։ Այդ ժամանակից սկսած նրանց պետք է մի քառորդից մինչև կես ֆունտ կարտոֆիլ տալ (կարտոֆիլը կամաց կամաց պետք ե ավելացնել), մանրած հացահատիկ — մինչև մեկ ու կես ֆունտ, և 9 ֆունտ յերեսը քաշած կաթ։

Տասնեւմեկյերորդ շաբաթից սկսած կարելի յե

չորս-չորս ֆունտ կարտոֆիլ տալ: Այդպես պետք է, կամաց կամաց ավելացնելով, քառորդ ֆունտից մինչև 4 ֆունտի հացնել: Հացահատիկից ել նույնքան յեն տալիս, իսկ յերեսը քաշած կաթից որական մինչև 12 ֆունտ: Կարտոֆիլի մի մասի փոխարեն կարելի յե գազար կամ բազուկ տալ—մի ֆունտ կարտոֆիլի տեղ յերկու կամ յերկու և կես ֆունտ գազար:

Յերբ գոջիների 3 ամիսը լրանում ե, կարտոֆիլ տալիս են նույնքան, հացահատիկ ևս նույնքան, իսկ կաթը սկսում են պակսեցնել և ամսի վերջին ամեննեին չեն տալիս: Կաթի փոխարեն տակեր են տալիս՝ որական 3—4 ֆունտ գազար կամ բազուկ: Ի հարկե, յեթե տնտեսությունը յերեսը քաշած ավելորդ կաթ ունի,—միանգամայն հաշիվ կա խոզերին կաթ տալ: Այն ժամանակ կամ կարտոֆիլը կարելի յե պակսեցնել կամ տակերը:

Չորրորդ ամսից կարելի յե տալ որական ամեն մեկին զեց ֆունտ կարտոֆիլ, յերեք ֆունտ մանրած հացահատիկ. կաթ, յեթե ավելորդ չկա, բոլորովին չտալ, իսկ տակերից որական 3—4 ֆունտ տալ:

Կեցյերորդ ամսի վերջից այսպես պետք է կերակրել՝ ամեն մեկին ութը ֆունտ կարտոֆիլ, մանրած հացահատիկ մինչև յերեք և կես Փ.,

և տակն՝ մինչև 4 ֆունտ: Տասնյերորդ ամսից—տասը ֆունտ կարտոֆիլ են տալիս, չորս ֆունտ տակն և չորս ֆունտ մանրած հացահատիկ:

Ինչպես յաղացնել խոզերին: Գյուղացիների տնտեսության համար ես առանձնապես պիտանի յեմ համարում խոզերը չաղացնել՝ միսը ծախելու համար: Դրա համար խոզերին սկսում են լավ կերակրել զեց ամսից կամ մի քիչ հետո: Յեթե կանոնավոր են կերակրում, խոզերի քաշը այդ ժամանակ 4 6 փութ ել լինում: Յուղ քիչ ե ստացվում, բայց դրա փոխարեն միսը ամենալավ տեսակի յե լինում, մեջը յուղի շերտեր: Առանձնապես լավ ել լինում բերքշիրի խոզերի միսը, բայց անզլիական սպիտակ խոզերն ել ընտիր միս յեն տալիս, վոր բազարում շատ բարձր ե գնահատվում:

Գոջիների կերին մի մի թեյի գդալ կավիճ և սաստիկ այրած ու աղած վոսկը ավելացնել: Կավիճն ու վոսկը ողտակար են այն կողմից, վոր գոջիները լավ, ուժեղ մարմին են ունենում:

Խոզերի միսը շատ լավ ել լինում, յերբ նրանց գարի, ցորեն, հաճար, յերեսը քաշած կաթ, շիճուկ, սիսեռ, լոբի, տակեր (գազար և բազուկ) են տալիս, իսկ յերբ վոր վարսակով, սիմինդրով, կարտոֆիլով են կերակրում,—միսն ել, ճրագուն ել այնքան պինդ չեն լինում:

Յերեքից մինչև չորս տարեկան խողին չաղցնելու համար այսպես են խորհուրդ տալիս կերակրել. որական 10 ֆունտ կարտոֆիլ, մեկ ֆունտ սիսեռի ալյուր, կամ թե որվա կերը այսպես կարելի յե պատրաստել. 23 ու կես ֆունտ գազար, յերեք ու կես փունտ գարի: Ինչտեղ կով շատ կա և անտեսությունը յուղ շինելով ե պարապած, խոզերի կերը այսպես կարելի յե պատրաստել. 11 ֆունտ բազուկ, կես ֆունտ գարի, 15 ֆունտ յերեսը քաշած կաթ. կամ թե 3 ու կես փունտ գարի, 21 ֆունտ շիճուկ և 7 ֆունտ կարտոֆիլ:

Ի՞նչպես միաժեակ կերերի ուրիշ տեսակներով փոխարինել: Մննդաբարության կողմից, վարսակի մեկ ֆունտը կարելի յե ուրիշ կերով փոխարինել—գարիով, հաճարով, սիսեռով, ցորենով, սմինդրով, յուրաքանչյուրից վերցնելով միայն իննը տասնորդական ֆունտ, կարտոֆիլ—3 ու մի քառորդ ֆունտ, գազար 7 ֆունտ, բազուկ 8—12 ֆունտ, շաղդամ 12 ֆունտ, ցորենի թեփ մեկ ֆունտից մի քիչ ավել, սիսեռի ալյուր մեկ ֆունտ, չկճպած խոզակաղին 1 ու կես ֆունտ:

Նշանակում ե ուրեմն, վոր միշտ կարելի յե հարմարեցնել, թե վոր կերը ինչ կերպ փոխարինել: Միաժեակ կերը միշտ ախորժակով չեն ուտում խոզերը, ուստի պետք ե աշխատել

ժամանակ առ ժամանակ կերը փոխել: Այն ժամանակ չաղցնելու գործը լավ կգնա:

Խոզերին արտատեղերում կերակրելլ: Թե գոյներին և թե խոզերին արոտալից տեղերը շատ ոգտակար են: Գյուղացուն ել արոտատեղը մեծ ոգուտ ե տալիս: Այդ դեպքում խոզերին կերակրելը շատ և շատ եժան ե նստում: Բացի դրանից, խոզերն արոտատեղերում ավելի զվարժ են և քիչ են հիվանդանում: Յեթե գյուղերում խոզերին չեն արածացնում, գոյջիների համար պետք ե գոնե մի փոքրիկ անկյուն ցանկապատել:

Արոտատեղը առանձնապես գոյջիների համար և անհրաժեշտ: Արոտատեղում նրանք անհամեմատ լավ են աճում: Յեթե գոյջիներին ամբողջ ժամանակ գոմերում ենք պահում, նրանց վուկորները հաճախ շատ թույլ են լինում: Այդպիսի խոզերից չի կարելի լավ հասակ սպասել: Իսկ այն գոյջիները, վորոնք գարունն ու ամառը արոտատեղերումն են անց կացնում, պինդ մարմին են ունենում, և այդպիսի գոյջիների միսն ու յուղը ավելանում ե:

Խոզերին ավելի ուշ պետք ե դուրս քշել արածելու, յերբ ցող չի լինում: Յերեկոյան ել, մինչև ցողի ընկնելը նրանց պետք ե տուն քշել: Այդ մանավանդ պետք ե անել այն ժամանակ,

յերբ խողերը առվույտ (յոնջա) բուսած տեղում
են արածում։ Փորձակայաններում հաշվում են,
վոր առվույտ ցանած մի որավար գետինը ամա-
ռվա ընթացքում 60 փութ խոզի միս և յուղ
և տալիս, այսինքն դա նշանակում ե, վոր յե-
թե մի այդպիսի՝ առվույտ ցանած հողի վրա խո-
զերի մի խաչն արածացնեն, այդ հողը 60 փութ
միս և յուղ և ավելացնում։

Խոզերի համար առվույտը շատ լավ կեր ե, Խո-
զաբույժերից շատերը ձմեռը խոզերին ջրի գոլոր-
շիյով տաքացրած ու տրորած առվույտով են կե-
րակրում (դնում են առվույտը մի ամանի մեջ,
տաք ջուր ածում և ամանի բերանը ծածկում)։

Արածելու տեղում խոզերի համար ջուր և
ծառեր պետք ե լինեն, կեսորին, յերբ արել
խանձում ե, խոզերը սիրում են ծառերի շվա-
քում պառկել։ Յեթե արածելու տեղում թփոտ
տեղ կա, ապա շոք ժամանակ թփերի միջև են
արածացնում, իսկ առավոտյան և յերեկոյան—
բաց տեղում։

Առավոտյան, նախ քան արոտավայր քշելը,
խոզերին փոքր ինչ չոր կեր պիտի տալ։ Այդ-
անպատճառ պետք ե անել, յերբ խոզերը առ-
վույտ ցանած տեղում են արածում։ Թե չե խո-
զերը մեծ ազահությամբ են հարձակվում այդ
խոտի վրա և կարող են հիվանդանալ։

Վորպեսզի խոզերը միանգամից վոտնատակ
չանեն ամբողջ գետնի խոտը, լավ ե նրանց հա-
մար շարժական ցանկապատեր շինել։ Այդ ցան-
կապատերը գրոշ արժեն, իսկ նրանց տված
ոգուտը մեծ ե,—խոզերը շրջապատված տեղի
խոտը լավ մաքրագարում են։ Ամբողջ խոտը
ուտելուց հետո, նրանց քշում են կողքի տեղը։


Խոզերի համար ի՞նչպէս կեր պատրաստել։

Ինչ կենդանու յել ամբողջ հատիկներով կե-
րակրելու լինենք, նրա թրիքի մեջ կարելի յե
ստամոքսում չմարսված հացահատիկներ գտնել։

Ուրեմն յերբ չմանրած, ամբողջ և չոր հացա-
հատիկներով ենք կերակրում, հացահատիկների
մի մասը զուր տեղը կորչում ե, իսկ պառակ
կենդանիները իրենց մաշված ատամներով շատ
ավելի հացահատիկ են կորցնում, վորովհետև մաշ-
ված ատամները չեն կարողանում չոր հացահա-
տիկները լավ ծամել։

Այդ պատճառով միշտ հարկավոր ե չոր հա-
ցահատիկները կամ մանրել կամ տափակացնել։
Մանրած կամ տափակացրած հացահատիկը լավ
ե մարսվում։ Կենդանու ծամելու գործը թեթե-
վացնելու համար պետք ե հացահատիկների վրա
տաք ջուր ածել։ Հացահատիկը յեփել հարկավոր
չի, այլ միայն վրան յեռման ջուր ածել։

Բայց հացահատիկների գրա շատ քիչ պետք



ե ջուր ածել։ Փորձերը ցույց են տվել, վոր այն կերն ե ամենից լավ մարսվում, վոր քիչ ջրով ե թրջված, որինակի համար — չոր հացահատիկների ամեն մի փունտին միայն յերկու փունտ ջուր պիտի վերցնել։

Բոլոր արմատապտուղները հում-հում պիտի տալ, — այդ դեպքում նրանք ավելի լավ են մարսվում։ Վորպեսզի խոզը կամ գոջին տակերից չխեղդվեն, այդ տակերը սանդով պետք ե մանրել։ Յեթե տնտեսության մեջ փչացած, փթած տակեր կան — դրանք հարկավոր ե լավ լվանալ, փթած տեղերը քերել կամ կտրել, իսկ ապա խաշել։ Փթած բանջարեղեններ ուտեցնել պետք չե, — խոզերը կարող են հիվանդանալ։

Միշտ պետք ե խաշած կարտոֆիլ տալ։ Խոզերի վրա հում կարտոֆիլը վատ ե ներգործում։

Ալյուրով և թեփով կերակրելիս, կերը պետք ե թանձր խմորի պես լինի, վոր կենդանուն կարելի լինի ստիպել ծամել այդ խմորը։ Ինչպես մարդը, այնպես ել կենդանին կերակուրը ըստ հնարավորության լավ մարսելու համար պետք ե լավ ծամի, թքի հետ խառնի։ Իսկ յեթե առանց ծամելու կուլ տա, — կերակուրը վատ կմարսվի։ Ահա թե ինչու վոչ մի կենդանուն ջրալի ալյուրով և թեփով պետք չե կերակրել, վորովհետեւ կերի կեսը չի մարսվի։

Ամենից ոգտավետն ե — կերակրել այնպես, ինչպես քիչ վերև ասացի. կերակրելուց հետո մաքուր ջուր տալ խմելու։

Խոզերի կերակրի մեջ համի համար մի քիչ աղ պետք ե դցել, բայց շատ քիչ, — մի խոզի համար ամիսը մի փունտից վոչ ավելի, իսկ գոջիներին ամսեկան մի յերրորդական փունտն ել հերիք ե։ Յեթե գոջիներին ճաշի մնացորդներ, խոհանոցի զանազան մնացորդներ են տալիս, այն ժամանակ կարելի յե ամենափառ աղ չտալ։

Որը յանի՞ անզամ յեվ յե՞րբ հողերին կերակրել։ Մինչև վոր գոջիները Յ ամսական չդառնան, որը հինգ անգամ պետք ե նրանց կերակրել, իսկ առաջին ամսի կեսին լավ ե որը նաև վեց անգամ կերակրել։ Յեվ հարկավոր ե միշտ նույն ժամերին կերը տալ։ Յեթե իր ժամանակին չկերակրենք, գոջիները քաղցից կճճվան, — այդպես կերակրելուց քիչ որուտ կլինի։ Չորրորդ ամսին բավական ե որական չորս անգամ կերակրել. իսկ հինգերորդ և վեցերորդ ամիսներին որը միայն յերեք անգամ։

Մի անգամից պետք ե այնքան կեր տալ, վոր խոզը կարողանա ամբողջը քառորդ ժամում ուտել առանց ընդհատելու։ Յեթե Կա կերը ամբողջապես չուտի, տաշտից հեռանա և պառկի —

իսկույն և յեթ տաշտից կերը պիտի վերցնել և
տաշտը լվանալ:

Յեթե չկերած կերակուրը տաշտի մեջ թող-
նենք, նա շատ շուտ կթթվի, և այդպիսի փշա-
ցած կերակրից խոզը հիվանդանալ կարող եր:
Իսկ այդ հիվանդությունները չեն թողնում, վոր
խոզը կամ գոջին լավ աճի:

Առանց կարի կարելի՞ յէ լավ զոջի մեծա-
ցնել: Զե՛, չի կարելի: Կաթը անհրաժեշտ ե, թե
չե՞ ինչքան ել կեր տալու լինենք նրան,—քիչ
ոգուտ կլինի: Փորձակայաններից մեկում փորձ
են արել տեսնելու, թե ինչ կլինի, յեթե խոզի
գոջիններին գրեթե առանց կաթի մեծացնեն:

Կերցրել են մի մորից յերկու լիովին միատեսակ
գոջի և բաժանել նրանից: Մեկին սկսել են կա-
թով, մանրած հացահատիկներով կերակրել, իսկ
կարտոֆիլ և տակեր քիչ են տվել: Մյուս գո-
ջուն սկսել են կարտոֆիլով կերակրել, բայց շատ
քիչ են տվել ցորեն և հացահատիկ:

Այսպես չորս ամիս են կերակրել, իսկ հետո
սկսել են յերկուսին ել միատեսակ կերակրել:
Բայց յերկրորդ գոջին առաջինից շատ եր յետ
մնացել. լավ, կանոնավոր կերակուրն ել վոչ մի
ոգուտ չեր տվել:

Յերբ յերկու գոջինների 8 ամիսը լրացել ե,
նրանց կշռել են և դուրս ե յեկել, վոր առաջինի

քաշը 185 ֆունտ ե յեղեւ, իսկ յերկրորդինը՝
միայն 75 ֆունտ:

Ինձ կարող են ասել՝ բանը ինչո՞ւմն ե, Յե-
թե գոջին կաթով և հացահատիկներով կերա-
կրենք—նա ինչքա՞ն կնստի մեզ վրա: Բայց չե՞
վոր խոսքը նրա մասին եր, վոր խոզին հեշտ ե
մեծացնել՝ նրան ամեն տեսակ անպեսք բաներ
և տականքներ տալով. մաքուր հացահատիկներն
ու կաթը արդյունավետ կերպով կարելի յե ծա-
խել, քան թե գոջիններին ուտեցնել:

Վոչ, այդ ավելի ձեռնտու չի: Նախ 5 ֆունտ
հացահատիկը ամենաշատը 10 կոպեկ արժի, իսկ
5 ֆունտ հացահատիկը ուտելով, խոզը 1 ֆունտ
միս և յուղ կտա: Այդ մի ֆնտի գինը գոնե յե-
ռապատիկ թանգ ե, բայց ավելի ճիշտ—քառա-
ռապատիկ: Բայցի գրանից, կաթով և մանրած
հացահատիկով պետք ե միայն առաջին յերկու,
շատ շատ՝ յերեք ամիսը կերակրել: Իսկ յերբ
գոջին լավ պահենք—հետո արդեն կարելի յե
ավելի եժանագին կերի դիմել: Իհարկե, զանա-
զան անպեսք բաներ ուտեցնելով՝ չի կարելի
սպասել, վոր նա շուտ կածի, բայց և այնպես
լավ կմեծանա:

Խոզի մասին ի՞նչ պետք ե հիշել: Ճիշտ ե,
խոզն իրոք մի տուփ ե, ուր գյուղացին իր ինա-
յողությունն ե զնում, բայց վորպես զի այդ

ինայողությունը լավ տոկոս տա, շատ բան
պետք ե անել:

1. Միտքդ պահիր, վոր լավացեղ խոզը յեր-
կու և կես անգամ ավելի լավ ե աճում, քան թե
հասարակ խոզը, իսկ խառնուրդը—հասարակից
յերկու անգամ լավ։ Ուրեմն հաշիվ կա թանգ
վճարել, բայց լավ գոջի ձեռք բերել։

2. Գարնանը և ամառը գոյիներին չի կարե-
մի գոմում պահել։ Անպատճառ պետք ե թողնել,
վոր նրանք գետինը փորփրեն։ Ավելի լավ ե
ամառը խոզերին արոտատեղերում արածացնել։

3. Կերի տաշտերը միշտ մաքուր պիտի լինեն,
մանավանդ յեթե գոջուն կաթով են կերակրում։
Թթված կերը ամբողջ գործը կարող ե փչացնել։
Հիվանդացած գոջին յեթե առողջանա յել, նա
լավ չի աճի և իր իսկական քաշը չի տա։


4. Գարնանը, ծայրահեղ գեպքում, յերբ գոյ-
իներին անկարելի յե դուրս թողնել, նրանց
խոտ, առվույտ, գոլորշյով տաքացրած թարմ
աղինչ պետք ե տալ։ Կանգնելու տեղում կարե-
լի յե 2—3 կտոր ճիմ դնել, վոր նա կարողանա
հող փորփրել։

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆՐ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
— Հայկական սեկցիա —
Մոսկվա, Նիկոլսկի փող. և 10

- Ի. ԱՏՈԼԻՆ. — Գյուղացիական հարց։ Գինը 50 կոպ.
Ի. ԱՏՈԼԻՆ. — Ազգային հարց։ (Տպագրվում է)։
Վ. ԼԵՆԻՆ. — Պատգամներ յերիտարարության։ գինը 15 կ.
Ի. ՖԼԵՇՈՎ. ՍԿԻՅ. — Մեր առաջին բանի.՝ գյուղ. հեղափո-
խուրյունը. Գինը 70 կ.
Ն. ԿՐՈՒՊՏՎԱՅ. Յ. — Լինինի պատգամները ժողովրդական
լուսավորության մասին։ Գինը 20 կ.
Լ. Վ. ԲԵՆՏՎԵՎ. — Ինչպես աշխուժացնել խորհուրդները.
Զ. ՅՈՎՈՐՄԿԱՅ. ՅԱ. — Կլարա Ֆելիխն (կենսագր.)։ Գինը 10 կ.
Ն. ՑԵՍԻՐՅԱԿՈՒԼ. ՈՎ. — Ազգ. հարցը յեվ դպրոցը։ գ. 40 կ.։
Բ. ԺԱՎՈՐՈՎՆԿՈՎ. — Հասարակագիտությունը և ասինա-
նի դպրոցում։ գինը 65 կ.
Ն. ՅԵԼԻԶՈՐՈՎ. — Ինչ վորուեց կուս. ԽIV համագ. 112
եջ, գ. 30 կ.։
Ա. ԴՄԵՔՐԵՎՅՈ. — Տգիտությունը յեվ սնահավատությունը։
Գինը 15 կ.
Մ. ԼԻՎԵՆՍԿԻ. — Գյուղանեսեսական հարկ։ Գինը 20 կ.
ՑԵՍԻՊՈՎ. — Գյուղացիության պահանջները յեվ խորհրդա-
յին դպրոցի ծրագրները։ Գինը 12 կոպ.
Պ. Վ. Ա. ՍՈՒՎ. — Հողի մշակումը յերաշի ժամանակ։ Գի-
նը 40 կոպ.
Լ. ՑՈԶԵՅՈՎ. Հ. Զ. — Գյուղ կանգնի գերան կկոտրի (կոռպե-
րացիան գյուղում)։ Գինը 30 կոպ.
Ի. ՊՈՒՅԱ. ՊՈԼՍԿԻ. — Ասծու կամբը թե՞ գյուղանեսա-
կան գիտությունը։ գինը 20 կ.
Ա. ԿՐԱՎ. ՉԵՆԿՈ. — Թե ինչպես կարելի յե գյուղում ե-
լեքտրականություն անցկացնել։ Գինը 15 կ.
Պ. ԼԻԽՈ. ԶԵՎ. — Խոզը գյուղացիների կերակրողն ե։
Ն. ԲՐԱՈՒԴԵ. — Թե ինչպես գերանացին սիպեց, վար
կովի տարին յերկու անգամ ծնի։
Ա. ՍԿՈՒՐՐՈՒԽՈՎ. — Ինչպես ընտրել կարեատու կով։
Ա. ՍԿՈՒՐՐՈՒԽՈՎ. — Առաջին ոգնությունը հիվ. կենդա-
նուն, գ. 17 կ.

- Ա. ԲՐԱՆՍՔՈՒՐԳ.—Ընտանի կենդանիների վարակիչ
հիվանդուրյունները: Գինը 17 կ.
- Ն. ՍԵՄԾԵԿՈ.—Թոքախս. (պատկերազարդ): Գինը 25 կ.
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխանների վարակիչ հիվանդուրյունները. գ. 30 կ.
- Վ. ԲՐՈՆՆԵՐ.—Վեճերական ախտեր. Գինը 25 կ.
- Ս. ՍՊԵՐՈՆՍԿԻ.—Մոր այլբենարանը. (պատկ.):
- Ն. ՍԵՄԾԵԿԻՆ.—Առեվիր, երա վորդիները յեվ բունները: (Տպ.):
- Վ. ՑԱԶՎԻՑԿԻՅ.՝ Մարդկային բնակարանի պատմութ.՝
Գինը 15 կ.
- Դ. ԳՐՈՎՆԵ—Ինչպես է սարֆված ժիշերերը. (Տպագր.).
- Գ. ՐԵՄՑԱՅԿԻՅ.՝ Վորոն, կայծակ յեվ ելեքտրականուրյունները (Տպագրվ.):
- Ա. ԳՈԼ.՝ Կենդանիների յեվ մարդու ծագումը: (Տպագր.):
- Մ. ԳՈՐԿԻՅ.՝ Յերիտասարդ գրողը: Մարդի: Գինը 15 կ.
- Ա. ՍԵՐՈՅԻՒՄՈՎԻԶ.՝ Պատմվածքներ: (Տպագր.):
- Դ. ՄԱ.ՄԻՆ.՝ ՍիբիրթԱԱԿ.՝ Մոծակի յեվ առջիմտին: (Պատ. կեր.), գ. 15 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ.՝ Ճամբորդուրյուն այլբովլանով: (Պատկ.)
Գինը 22 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ.՝ Քիմիկոս Կուզկան: (Պատկերազարդ): Գինը 28 կոպ.:
- Ա. ԿՈՐՊՐԻՆ.՝ Յերկրի խորեւում: (Պատկերազարդ): Գինը 15 կոպ.
- Ա. ՆԵՎԵՐՈՎ.՝ Ինչպես եյին ապրում ժիկնիները յեվ ինչ արեց արնինե զինվորը: (Պատկ.): Գինը 16 կ.:
- Ա. ԿՐԱՎԶԵՆԿՈ.՝ Ինչպես Սաբոն կարմիր բանակային դարձավ: գ. 35 կ.
- Ֆ. ՑՈՔՍ.՝ Մինիստ մեկ ժամով: (Պատկերազարդ): Գինը 18 կոպեկ:
- Յ. Ռ.Դ.ԴԻՆ.՝ Պիոներ, պահպանիր առողջուրյունդ: Գինը 10 կոպեկ:
- ՈՒԺՈՎ.՝ Պատանի պիոներ: (Ժողովածու):
- Պ. Խ.ԵԲՆԻԿՈՎ.՝ Կարմրամորները: գինը 45 կ.

Դիմել՝ Մոսկվա, Никольская 10, Центриздату.
Կամ՝ Յանելու Հայաստանի Անդրամանական:



ՀՀ Ազգային գրադարան



NL0299057

ԳԻԱԸ 18 ԿՈՊ.

22.329



Агроном Лихачев

Свињя

крестьянск. кормилица

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза ССР

Москва

Никольская 10.

245